

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

7-րդ Գ դասարանում սովորում են 21 աշակերտ՝ 13 տղա, 8 աղջիկ: Նրանք բոլորն էլ պարտաճանաչ աշակերտներ են: Բոլորն էլ ընկերասեր են և սիրում են ազատ ժամանակը միասին անցկացնել: Աշակերտներից ոմանք լավ ասմունքում են, ոմանք էլ՝ լավ երգում: Աշակերտների մի մասը սիրում է ազատ ժամանակն անցկացնել ընթերցանությամբ: Դասարանում իշխում է համերաշխությունը, հարգանքը միմյանց և ուսուցիչների հանդեպ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:
2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա-մանկավարժական միջավայր:
3. Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողների և մանկավարժների միջև:
4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:
5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:
6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում:
7. Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի, որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

3.7 Դպրոց-ընտանիք կապը

Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

VII գ դասարան

1	ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
	Գիտելիքի դերն ու նշանակությունը	1ժ
2	Զրույց և ընտրություն	1ժ
3	Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես	1ժ
4	Եթե ես լինեի.....	1ժ
5	„Օղային տազնապ	1ժ
6	Կարողությունների հստակեցում	1ժ
7	Ես էլ քեզ նման եմ	1ժ
8	Բնական պաշարներ	1ժ
9	Աշակերտների իրավունքներ և պարտականություններ	1ժ
10	Պետական խորհրդանիշեր	1ժ
11	Էկոլոգիական հիմնախնդիրներ	1ժ
12	Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը	1ժ
13	Գնահատիր ինքդ քեզ	1ժ
14	Գնահատվող մրցույթ	1ժ
15	Բնական աղետներ	1ժ
16	Տվյալ բնակավայրում ,տարածքում հնարավոր տեխնաժին վթարների կանխարգելման ուղիները	1ժ
17	Անհատական պաշտպանության միջոցները	1ժ
18	Կլեկտիվ պաշտպանության միջոցները	1ժ
19	Աշակերտների գործողությունները հնարավոր տեխնաժին վթարների ժամանակ	1ժ
20		1ժ